Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մշակման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության քրեական իրավունքում իրավական որոշակիության ապահովման կարևորագույն նպատակը, քանի որ քրեաիրավական նորմերը պետք է լինեն խիստ որոշակի և բացառեն տարաբնույթ մեկնաբանություններ:

1. <u>Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.</u>

1) Դատարանի, դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի գործունեությանը ցանկացած ձևով միջամտելու եղանակների հստակեցում.

ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 332-րդ հոդվածի 1-ին մասով պատասխանատվություն է սահմանվում արդարադատության իրականացմանը խոչընդոտելու նպատակով դատարանի գործունեությանը ցանկացած ձևով միջամտելու, իսկ նույն հոդվածի 2-րդ մասով՝ պատասխանատվություն է սահմանվում գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությանը խոչընդոտելու նպատակով դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի գործունեությանը ցանկացած ձևով միջամտելու համար: Պրակտիկայում հաճախակի են հանդիպում դեպքեր, երբ արդարադատության իրականացմանը խոչընդոտելու նպատակով դատարանի գործունեությանը, ինչպես նաև գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությանը խոչընդոտելու նպատակով քննիչի գործունեությունը միջամտվում է դատավարական գործողությունների ժամանակ նյութերը ոչնչացնելով կամ վնասելով, թեև քրեական իրավունքի գիտության մեջ նյութերը ոչնչացնելը կամ վնասելը դիտվում է որպես գործի քննությանը խոչընդոտելու նպատակով քննիչի գործունեությանը միջամտել, սակայն իրավակիրառ պրակտիկայում հանդիպում են իրավական անորոշություններ:

Առկա անորոշությունները վերացնելու նպատակով Նախագծով առաջարկվում է Օրենսգրքի 332-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում կատարել համապատասխան լրացում՝ արդարադատության իրականացմանը խոչընդոտելու նպատակով դատարանի գործունեությանը, ինչպես նաև գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությանը

խոչընդոտելու նպատակով դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի գործունեությանը ցանկացած ձևով միջամտման եղանակ նախատեսելով նաև *քրեական գործի լուծման համար նշանակություն ունեցող ապացույցների և այլ նյութերի ոչնչացումը կամ վնասումը:*

2) Սուտ ցուցմունք կամ կեղծ եզրակացություն տալու կամ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար պատասխանատվության ենթարկվելը մինչդատական վարույթում և սահմանված պատժի չափի հստակեցում.

Օրենսգրքի 338-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն սուտ ցուցմունք, կեղծ եզրակացություն տալու և սխալ թարգմանություն կատարելու դեպքում անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե իր արարքը նշանակություն չէր կարող ունենալ գործի լուծման համար, կամ նա նախնական քննության կամ դատական քննության ընթացքում մինչև նախնական քննության ավարտը կամ դատական քննության ընթացքում մինչև դատարանի կողմից դատավճիռ, վճիռ կամ որոշում կայացնելը կամովին հայտնել է իր տված սուտ ցուցմունքի, կեղծ եզրակացության կամ սխալ թարգմանության մասին: Սակայն սուտ ցուցմունքի հանցակազմը տարածվում է ոչ միայն դատարանում ցուցմունք տալու դեպքերի, այլ նաև քրեական դատավարության մինչդատական վարույթի ընթացքում ցուցմունքներ տալու նկատմամբ: Անդրադառնալով սուտ ցուցմունք տալու հանցակազմի ավարտման պահին՝ նշենք, որ ՀՀ Վճռաբեկ դատարանը 2010 թվականի օգոստոսի 28-ի թիվ ԼԴ/3901/01/09 քրեական գործով կայացրած որոշման մեջ արտահայտել է հետևյալ դիրքորոշումը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված սուտ ցուցմունք տալու հանցակազմի առկայության կամ բացակայության մասին հետևության հնարավոր կլինի հանգել միայն համապատասխան դատական ակտը կայացնելուց հետո: Վճռաբեկ դատարանի դիրքորոշումից պարզ է դառնում, որ, անձն իր կողմից տրված սուտ ցուցմունքի, կեղծ եզրակացության և սխալ թարգմանության համար ենթակա է քրեական պատասխանատվության միայն դատաքննության արդյունքներով կայացված վերջնական դատական ակտի գոյության պայմաններում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Նախագծով նախատեսվում է Օրենսգրքի 338-րդ հոդվածի 3-րդ մասում կատարել համապատասխան լրացում՝ հստակեցնելով, որ անձը սուտ ցուցմունք, կեղծ եզրակացություն տալու կամ սխալ թարգմանություն կատարելու հիմքով ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե նա նախաքննության ընթացքում՝ մինչև նախնական քննության ավարտը կամ դատական քննության

ընթացքում մինչև դատարանի կողմից դատավճիռ, վճիռ կամ որոշում կայացնելը կամովին հայտնել է իր տված սուտ ցուցմունքի, կեղծ եզրակացության կամ սխալ թարգմանության մասին:

Հարցը համակողմանի քննարկելու համար կներկայացվի հարցի վերաբերյալ նաև իրավաբան գիտնականների մոտեցումները ինչպես նաև արտասահմանյան երկրների փորձը:

Քրեական իրավունքի և դատավարության ոլորտի մասնագետներն առավելապես կողմ են, որ եթե քրեական գործն մինչդատական վարույթում կարճվում է, իսկ անձը տվել է սուտ ցուցմունք, ապա այն պետք է առաջացնի քրեական պատասխանատվությունը: Նշված մոտեցմանը կողմ է ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնը (տե՛ս ամփոփաթերթը): Բացի այդ գրականության մեջ նշվում է, որ հետաքննիչը, քննիչը և դատախազը քրեական գործով նույնպես իրականացնում են ապացույցների գնահատում՝ որոշակի դատավարական որոշում կայացնելով: Եթե այդ որոշումը վերաբերում է քրեական գործի ավարտին, ապա այդ գնահատումը չի հանդիսանում վերջնական, և հետևաբար վերջնական գնահատականը տրվում է դատարանի կողմից՝ ապացույցները համակցությամբ գնահատելու արդյունքում: Քրեական գործով վերջնական գնահատականը տալուց հետո միայն հնարավոր է պնդել, որ ցուցմունքները կեղծ են, թե՝ ոչ: Հետևաբար, սուտ ցուցմունք տալու համար վկայի կամ տուժողի նկատմամբ քրեական գործ հարուցել կարելի է միայն «հիմնական» այն գործով անհրաժեշտ ապացույցները համակցությամբ գնահատելու և դրա հիման վրա լիազոր մարմնի կողմից քրեական գործով կայացրած վերջնական որոշումն օրինական ուժի մեջ մտնելու դեպքում, որով վկան կամ տուժողը տվել է ցուցմունքները: Հեղինակը կարծում է, որ վերջնական գնահատական, բացի դատարանից, կարող է տալ նաև վարույթ իրականացնող մարմինը՝ քրեական գործի կարճման դեպքում[1]:

Ինչպես նշում է Ռ.Դ. Ռախունովը՝ սուտ ցուցմունք տալու դեպքով քրեական գործ հարուցելը նախաքննության փուլում վաղաժամ է և անհնարին, քանի որ պայմանավորված է ապացույցները համակցությամբ վերջնականապես գնահատելու անհրաժեշտ պայմանով: Իսկ դա հանդիսանում է «հիմնական» գործը քննող դատարանի բացառիկ լիազորությունը: Միայն դատարանում է հնարավոր վերջնականապես պարզել, ստում է վկան և առկա է արդյոք նրա ցուցմունքներում ստելու կանխամտածվածություն: Հեղինակը նշում է, որ եթե սուտ ցուցմունք տալու համար պատասխանատվության

[1] Правдивые показания: правовые меры по стимулирования в России и за рубежом (уголовное судопроизводство): Монография. СПб., 2008, էջ 107:

ենթարկելու հարցը հանդիսանար վարույթ իրականացնող քննիչի կամ հսկողություն իրականացնող դատախազի լիազորությունը, ապա դա կարող է խախտել մեղադրյալի պաշտպանության իրավունքը: **Հետևաբար, սուտ ցուցմունք տալու համար պատասխանատվության ենթարկելու հարցը չի կարող լուծվել նախաքննության փուլում: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ քրեական գործի վարույթն ավարտվում է այդ փուլում և չի ուղարկվում դատարան՝ այն կարճելու հիմքով: Այդ դեպքում քննիչն ինքն է իրականացնում ապացույցների վերջնական գնահատումը:**[2]

Ուկրաինայի քրեական դատավարության օրենսգրքի գիտագործնական մեկնաբանություններից մեկում նշվում է հետևյալ մեկնաբանությունը. «Սուտ ցուցմունք տալու համար վկային քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծվում է քրեական դատավարության այն փուլում, որում վերջնականապես վերլուծվել են ապացույցները և որոշվել է վկայի ցուցմունքի անհամապատասխանությունը քրեական գործի փաստական հանգամանքներին: Այսինքն, սուտ ցուցմունք տալու համար վկային քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծվում է դատավճիռ կայացնելուց, կամ **դատարանի կամ քննիչի կողմից քրեական գործը կարճելու մասին որոշում կայացնելուց հետո»:**[3]

Ա.Ս.Գորելիկի և Լ.Վ.Լոբանովի կարծիքով սուտ ցուցմունք տալու համար վկային քրեական պատասխանատվության ենթարկելու դեպքերի սակավաթիվ լինելը պայմանավորված էր այն հանգամանքով, որ քրեական գործը կարող էր հարուցվեր միայն «հիմնական» քրեական գործով որոշում կայացնելուն զուգահեռ: Այսինքն քննիչներն ու դատախազները զրկված են եղել ինքնուրույն քրեական գործ հարուցելու հնարավորությունից, անգամ եթե նախաքննության փուլում ցուցմունքների կեղծ լինելու փաստը հաստատվել է: ՌԴ քրեական դատավարության նոր օրենսգրքում բացակայում է նորմը, որով սահմանափակվում է նախաքննության փուլում նման գործեր հարուցելը, սակայն սուտ ցուցմունք տալու դեպքերի թերագնահատման վտանգը դեռ պահպանվել է:[4]

Ավստրիայի քրեական օրենսգրքի 288-րդ հոդվածի համաձայն՝ վկայի կողմից սուտ ցուցմունք տալը պատժվում է ազատազրկմամբ մինչև 3 տարի ժամկետով, իսկ եթե սուտ ցուցմունքը տրվում է երդման տակ գտնվելով, ապա այն պատժվում է ազատազրկմամբ 6 ամսից 5 տարի ժամկետով: *Վարչական մարմնին սուտ ցուցմունք*

---

[2]Рахунов Р.Д. Свидетельские показания в советском уголовном процессе, էջ 57; Стуканов А. Уголовные дела о лжесвидетельстве.

[3]Уголовно-процессуальный кодекс Украины. Научно-практический комментарий/ Под общей ред. В.Т. Маляренко, Ю.П. Аленина. Харьков, 2003, էջ 245:

[4]Горелик А.С., Лобанов Л.В. Преступления против правосудия. Էջ 273

տված անձը, Ավստրիայի քրեական օրենսգրքի 289-րդ հոդվածի համաձայն, պատժվում է ազատազրկմամբ մինչև 1 տարի ժամկետով: Սակայն, Ավստրիայի քրեական օրենսգրքի 291-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմնին կամ դատարանին սուտ ցուցմունք տված անձն ազատվում է պատասխանատվությունից, եթե ուղղում է դրանք՝ մինչև հարցաքննության ավարտը:

Նորվեգիայի քրեական օրենսդրության համաձայն՝ *ցանկացած պաշտոնական մարմնին ակնհայտ սուտ ցուցմունք տալը պատժվում է տուգանքով կամ ազատազրկմամբ մինչև 2 տարի ժամկետով, իսկ եթե դա կատարվում է երդման տակ գտնվող անձի կողմից՝ ազատազրկմամբ մինչև 5 տարի ժամկետով:* Նման պատիժ նախատեսվում է նաև այն դեպքում, երբ անձը նպաստում է կամ առնչություն ունի այլ անձի կողմից սուտ ցուցմունք տալուն, եթե նա գիտեր այդ ցուցմունքի սուտ լինելու մասին:

Գերմանիայի քրեադատավարական օրենսդրության համաձայն՝ հարցաքննությունից հետո վկան երդում է տալիս: Երդումը տրվում է դատավարության փուլում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով: *Նախաքննության փուլում վկային երդում տալ թույլատրվում է միայն հետևյալ դեպքերում. եթե առկա է քննչական գործողությունների կատարման անհետաձգելիությունը, եթե երդումն անհրաժեշտ է գործի քննության համար էական նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ վկային ճշմարտությունը պատմելուն հորդորելու համար, եթե կան հիմքեր ենթադրելու, որ վկան կարող է չներկայանալ դատաքննությանը:*[5]

Սուտ ցուցմունք տալու համար քրեական պատասխանատվությունը նախատեսված է Գերմանիայի քրեական օրենսգրքի 9-րդ բաժնում, որի 153-րդ պարագրաֆի համաձայն՝ *երդում չտված վկայի կողմից սուտ ցուցմունք տալը պատժվում է ազատազրկմամբ 3 ամսից 5 տարի ժամկետով:* Եթե վկան սուտ ցուցմունք է տալիս երդում տալուց հետո, ապա 154-րդ պարագրաֆի համաձայն, նա նվազագույնը պատժվում է 1 տարի ազատազրկման:

Ֆրանսիայի քրեական օրենսգրքի 434-14-րդ հոդվածի համաձայն՝ երդման տակ գտնվելով՝ ցանկացած դատական մարմնին կամ *դատական ոստիկանության պաշտոնատար անձին, ով գործում է առանձին դատական կարգադրության հիման վրա*, սուտ ցուցմունք տալը պատժվում է ազատազրկմամբ մինչև 5 տարի ժամկետով կամ տուգանքով: Սակայն անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից

[5]Уголовно-процессуальный кодекс Федеративной Республики Германии/ Пер с немецкого и предислов. А.Б. Филимонова. М., 1994.

սուտ ցուցմունք տալու համար, եթե նա կամավոր ցուցմունք է տալիս դատարանում *կամ քննիչ-դատավորին*՝ մինչև այդ գործով վերջնական որոշում կայացնելը:

Առհասարակ պետական մարմիններին սուտ տեղեկություններ հայտնելու վտանգավորության պայմանը կարող է հանգեցնել քրեական պատասխանատվության նաև Հայաստանում: Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 169.1-րդ հոդվածով պատժելի է քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններին սուտ տեղեկություններ հաղորդելը (հոդվածը լրացվել է 09.06.04 ՀՕ-97-Ն օրենքով): Հետևաբար սուտ լինելու հանգամանքը կարող է հաստատվել ոչ միայն դատական մարմինների կողմից, այլ նաև պետական այլ մարմինների կողմից՝ համակցությամբ ներկայացված փաստերն ուսումնասիրելու արդյունքում:

3) Ցուցմունք տալուց հրաժարվելու համար պատասխանատվության ենթարկվելը, որը կատարվել է ծանր և առանձնապես ծանր հանցագործության փաստի կապակցությամբ, ինչպես նաև շահադիտական դրդումներով.

Նախագծի 3-րդ հոդվածով նախատեսվող փոփոխության համաձայն Օրենսգրքի 339-րդ հոդվածը լրացվել է 1.1 մասով, որը պատասխանատվություն է նախատեսում նույն արարքը ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության փաստի կապակցությամբ հարուցված վարույթի կամ մեղադրանքի առնչությամբ կամ շահադիտական դրդումներով կատարելու համար:

Պետք է տարբերակված մոտեցում ցուցաբերել ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության վերաբերյալ մեղադրանքներով ցուցմունք տալուց հրաժարվելու և ոչ մեծ կամ միջին ծանրության գործերով ցուցմունք տալուց հրաժարվելու միջև, ուստի առաջարկվում է դրանք նախատեսել որպես նշված հանցակազմի ծանրացնող հանգամանքներ:

Գործող Օրենսգրքում նախատեսված են մի շարք դեպքեր, երբ արդարադատության դեմ ուղղված հանցակազմերի ծանրացնող հանգամանք է, եթե այն կատարվել է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների վարույթով՝ սուտ ցուցմունք կատարելը ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մեջ մեղադրանքի առնչությամբ (339-րդ հոդված), քրեական գործով ապացույցներ կեղծելը, որը՝ կատարվել է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների վերաբերյալ գործերով (349–րդ հոդված):

2. <u>Առաջարկվող կարգավորման բնույթը.</u>

Նախագծով առաջարկվող լրացումներով և փոփոխություններով հստակեցվում են դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի գործունեությանը ցանկացած ձևով միջամտելու եղանակները, սուտ ցուցմունք կամ կեղծ եզրակացություն տալու կամ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար մինչդատական վարույթում պատասխանատվություն ենթարկելու իրավահարաբերությունը:

3. <u>Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձիք.</u>

ՀՀ քննչական կոմիտե:

4. <u>Ակնկալվող արդյունքը.</u>

Նախագծի ընդունմամբ իրավական կարգավորում կստանան քննչական պրակտիկայում տեղ գտած մի շարք արարքների քրեականացման և դրանց համար քրեական պատասխանատվության սահմանման հարցերը: